Resolve Academy

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ և ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ԵՎ ՐԻԶՈԼՎ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԻՋԵՎ

ք. Երևան 5 սեպտեմբերի 2024թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը, ի դեմս ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյանի (այսուհետ՝ Կողմ 1), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Ռիզոլվ Ակադեմիան, ի դեմս տնօրեն Տաթևիկ Կարապետյանի (այսուհետ՝ Կողմ 2), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն Համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են համագործակցել Հուշագրի 3-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

2.2 Կողմերի առաքելությունն է նպաստել իրավաբանական կրթությանը, գիտական փորձի փոխանակմանը, իրավաբան ուսանողների և երիտասարդ իրավաբանների սոցիալական պատասխանատվության խթանմանը, ներառյալ վեճերի լուծման այլընտրանքային միջոցների վերաբերյալ իրազեկմանը և միմյանց հետ համագործակցելով արբիտրաժային մշակույթի զարգացմանը:

3. ՆՊԱՏԱԿԸ և ՇՐՋԱՆԱԿԸ

3.1 Սույն Հուշագրի շրջանակներում համագործակցության ցանկացած խնդիր/նախագիծ պետք է բացահայտվի Կողմերի միջև քննարկման և փոխադարձ համաձայնության միջոցով: Սույն Հուշագիրը որևէ պարտավորություն կամ ակնկալիք

չի ստեղծում կողմերից որևէ մեկի համար՝ մյուսի հետ Ծրագրերում աշխատանք կատարելու կամ դրանցում մասնակցելու համար: Յուրաքանչյուր կողմ կարող է (իր հայեցողությամբ) ընտրել կամ մերժել մասնակցել մյուս կողմի առաջարկված ցանկացած նախագծի: Եթե Կողմերը համատեղ կազմակերպում են որևէ նախագիծ, ապա պետք է նախապես համաձայնեցնեն ծրագրին իրենց ներգրավվածության բոլոր պայմանները:

3.2 Սույն Հուշագրով Կողմերը համագործակցում են համատեղ կրթական ծրագերի իրականացման ուղղություններով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն Հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար:

4.2. Կողմերը համագործակցության շրջանակում կարող են տեղեկատվություն և հրապարակումներ փոխանակել արբիտրաժի և վեճերի այլընտրանքային լուծման ձևերի վերաբերյալ էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

5. ՈՉ ԲԱՑԱՌԻԿՈՒԹՅՈՒՆ

5.1. Սույն Հուշագիրը նախատեսված չէ Կողմերի միջև բացառիկ հարաբերություններ ստեղծելու համար, և յուրաքանչյուր կողմ իրավունք ունի ազատորեն համագործակցել երրորդ կողմերի հետ:

6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ

6.1. Կողմերը պետք է պահպանեն գաղտնիություն սույն Հուշագրի բովանդակությանը և կողմերից որևէ մեկի գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկատվության, որը բացահայտվել է մյուս կողմին: Կողմերից ոչ մեկը չպետք է օգտագործի նման գաղտնի տեղեկատվությունը որևէ այլ նպատակի համար, քան սույն Հուշագրով նախատեսված նպատակների կատարումը:

6.2. Կողմերին թույլատրվում է հրապարակել սույն Հուշագրի ստորագրումը իրենց համապատասխան կայքերում և սոցիալական մեդիայի ալիքներում:

7. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1. Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

8. ՀՈՒՇԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

8.2 Սույն Հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Ռիզոլվ Ակադեմիա»
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Վաղարշապատ, Մաշտոցի 81
Ռեկտորի ժ/պ՝ Տիգրան Սիմոնյան	Տնօրեն՝ Տաթևիկ Կարապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.